

**Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ղեկավարի
2014 թվականի 1-ին կիսամյակի
հաշվետվություն**

Արմավիրի մարզի Հացիկ համայնքն ունի 723 տնտեսություն, 2973 բնակիչ: Համայնքն ունի 1353.3 հա վարչական տարածք, որից 935 հա սեփականաշնորհված հողեր են (մեկ հողաբաժնի չափը 0.71հա է), պետպահուստի հողերը 55,04 հա են: Համայնքապատկան բնակելի տների թիվը 422 է, ընդհանուր մակերեսը՝ 29370 քառ. մետր է:

Հացիկ համայնքի 2014թվականի 1-ին կիսամյակի բյուջեն ունի հետևյալ տեսքը.

Եկամտային մաս	պլան /հազար դրամ/	կատարված /հազար դրամ	
<u>վարչական բյուջե</u>			
1.հողի հարկ	19000.0	6363.3	33.4%
2.գույքահարկ փոխդրամիջ.	2050.0	1056.6	51.5%
3.գույքահարկ շենք. շին.	150.0	36.7	27.5%
4.տեղական տուրքեր	300.0	0	
5.հողի վարձավճար	1765.0	150.0	8.5%
6.պաշտոնական տրասֆերտներ	27235.9	13385.7	49.1%
որից պետ.բյուջեից դոտացիա	26264.7	13132.2	50.0%
սուբվենցիա	971.2	253.5	26.1%
7.տարեսկզբի ազատ մնացորդ	12085.6	12085.6	
ընդամենը	62586.5	33067.8	52.8%

Ծախսային մաս	պլան /հազար դրամ/	կատարված /հազար դրամ/	
<u>վարչական բյուջե</u>			
տեղական ինքնակառավարում	22778,7	6736.5	29.6%
համայնքային այլ ծառայություններ	1290.0	890.0	69.0%
սոցապահովագր. և ապահով.	5400.0	2000.0	37.0%
մշակույթ, կրոն, սպորտ	1200,0	200.0	16.7%
կրթություն	1671.2	653.4	39.1%
դաշտամիջ.ճան.նորոգում	900,0	500,0	55.5%
սան. մաքրում	2400.0	715.8	29.8%
փողոցների լուսավորում	3300,0	328.0	89,5%
ջրամատակարարում	7800,0	2749.6	35.3%
պահուստային ֆոնդ	3761.0	-	
ընդամենը	50500.9	14773,3	29.3%

<u>Ֆոնդային բյուջե</u>	985.6	374.0	37.9%
սարք.սարքավ. ձեռք բերում	3100,0	0	
տրանսպ. միջոցի ձեռք բերում	9000.0	90.0	10.0%
կապ. նորոգումն ծախսեր ընդամենը	13085.6	1274,0	41,9%
<u>ընդամենը ծախսեր</u>	63586.5	16047.3	25.3%

Հացիկ համայնքի 2014 թվականի բյուջեն կազմելիս հաշվի են առնվել հետևյալ առաջնահերթ խնդիրները՝
 ա/ խնելու ջրի մատակարարումը
 բ/համայնքի աղբահանությունը
 գ/ճանապարհների վերանորոգումը
 դ/ ոռոգման ջրագծերի բարեկարգումը
 զ/փողոցների լուսավորումը

Գյուղատնտեսություն

Համայնքում հիմնականում զբաղվում են պտղաբուծությամբ և այգեգործությամբ, ինչպես նաև բուստան-բանջարանոցային կուլտուրաների մշակմամբ:
 2014 թվականի ապրիլին ցրտահարությունից տուժեցին ծիրանի այգիներն ամբողջությամբ, դեղձի և սալորի այգիները՝ մասնակի: Ցրտահարված ծիրանի այգիների սեփականատերերը ստացել են պետական աջակցություն՝ փոխհատուցվել է ցրտահարված հողատարածքների հողի հակի 100%-ը :

Կրթություն

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց . 33 ուսուցիչ, 350 աշակերտ:
 2014 թվականի հունիսից «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի կողմից կատարվում են հիմնանորոգման աշխատանքներ: Պետական միջոցներով կատարվում է դպրոցի մասնաշենքերի գազաֆիկացման և լոկալ ջեռուցման ապահովման աշխատանքները: Գյուղապետարանը աջակցում է դպրոցի բուֆետի նորոգման աշխատանքներին:
 Գյուղապետարանի աջակցությամբ դպրոցի շենքում բացվել և գործում է նախակրթարան: Գյուղապետարանը դպրոցին տրամադրում է դրամաշնորհ, որը որպես աշխատավարձ վճարվում է նախակրթարանի կրտսեր խմբի դաստիարակին:
 Մանկապարտեզը չի գործում, բնակեցված է փախստական և երկու անապահով բազմազավակ ընտանիքներով:

Մշակույթ

Գյուղն ունի մեկ երկհարկանի 300 տեղանոց մշակույթի տուն : Շենքում է գտնվում նաև գյուղի գրադարանը: Շենքը գտնվում է կիսավթարային վիճակում, որի պատճառով համայնքը զրկվել է մշակութային միջոցառումներ կինո, թատրոն, համերգ, կազմակերպելու հնարավորությունից:
 Մշակույթի տան վերանորոգման համար կազմվել է նախահաշիվ 48 մլն դրամի և ներառվել է քառամյա ծրագրում: Համայնքի և բարերարների աջակցությամբ

հիմնանորոգվել է մշակույթի տան տանիքը, տեղադրվել են նոր պատուհաններ: Համայնքն ակնկալում է աջակցություն սոցներդրումների ծրագրերի շրջանակներում: Գյուղում գործում է արևելյան մարտարվեստի խմբակ, որի պարապմունքներն անց են կացվում դպրոցի մարզադահլիճում: Խմբակն ունի համապատասխան գույք: Դպրոցում սկսել է գործել պարի խմբակ: «Հացիկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ը նույնպես իր աշխատանքները կազմակերպում է գյուղի դպրոցի մասնաշենքում:

Մշակույթի տան հիմնանորոգումից հետո խմբակներն իրենց աշխատանքները կկարողանան կազմակերպել ավելի լիարժեք պայմաններում:

Սոցոգնություն

2014 թվականի բյուջեով նախատեսված է 5,0 մլն դրամի սոցոգնություն համայնքի անապահով ընտանիքներին: Օգնությունը տրամադրվում է բնակիչների դիմումների համաձայն: Առաջին կիսամյակի ընթացքում տրամադրվել է 2.0 մլն. դրամ: Գյուղապետարանը նաև ցուցաբերել է աջակցություն այն ընտանիքներին, որոնց երեխաները սովորում են հանրապետության ԲՈՒՀ-երում՝ ուսման վարձը մասնակի վճարելով: 2014 թվականի բյուջեով նախատեսվել է օգնել յոթ ուսանողի: Առաջին կիսամյակում այդպիսի աջակցություն ստացել են չորս ուսանողներ:

Ներհամայնքային և միջդաշտային ճանապարհներ

Ներհամայնքային ճանապարհներն ունեն խիստ նորոգման կարիք:

Միջդաշտային ճանապարհները մշտապես բարեկարգվում են, որպեսզի գյուղմթերքները ժամանակին ու անվնաս դուրս բերվեն դաշտից և իրացվեն: 2014 թվականի 1-ին կիսամյակին այդ նպատակով ծախսվել է 500,0 հազար դրամ:

Խմելու ջուր

Հացիկ գյուղը խմելու ջրով ապահովում են երկու խորքային հորեր, որոնցից մեկը գտնվում է վթարային վիճակում:

Խմելու ջրի ներքին ցանցը կառուցված է 1965թ.-ին, գտնվում է բավարար վիճակում, վթարները վերացվում են օպերատիվ և ժամանակին: 2014թ. ընթացքում երկու խորքային հորերի պոմպերի վերանորոգման համար համայնքի բյուջեից ծախսվել է 974 000 դրամ:

Քանի որ խորքային հորերից մեկը գտնվում է վթարային վիճակում, ջուրը չի բավականացնում, և գյուղի ջրամատակարարումն ապահովվում է 98%-ով: Համայնքի լիակատար ջրամատակարարումն ապահովելու համար անհրաժեշտ է նոր խորքային հոր, որի շուկայական գինը կազմում է մոտ 20 մլն. դրամ, որից գյուղապետարանը պատրաստ է ներդնել 5 մլն. դրամը:

Գազաֆիկացում

Հացիկ համայնքում գազաֆիկացված է 374 բնակարան: Գյուղապետարանը նպատակ ունի իրականացնել ամբողջ գյուղի գազաֆիկացումը:

Փողոցների լուսավորում

2013 թվականից գյուղապետարանը սկսել է համայնքի փողոցների լուսավորության ցանցի վերականգնման աշխատանքները: 2013 թվականին վերականգնվել է ցանցի մոտ 30%-ը: Այդ նպատակով ծախսվել է 849,0 հազար դրամ: 2014 թվականին նախատեսվել է շարունակել այդ աշխատանքները և վերականգնել ցանցի ևս 50%-ը: Արդյունքում համայնքը 80%-ով կապահովվի արտաքին լուսավորությամբ:

Սանիտարական վիճակ
Համայնքի սանիտարական վիճակը բավարար է: Պարբերաբար կատարվում է աղբահանություն, ինչպես նաև շաբաթական աղբահանություններ:
2014 թվականին համայնքի բյուջեից 1-ին կիսամյակին աղբահանության համար ծախսվել է 715.8 հազար դրամ:

Ապրանքի իրացում
Գյուղապետարանը տարբեր կազմակերպությունների հետ կոորդինացում է ապրանքների իրացումը: Մասնավորապես խաղողի բերքի իրացման գործում պայմանագրեր ունենք Երևանի կոնյակի գործարանի, «Արարատ» կոնյակի գործարանի և ՄԱՊ-ի հետ: Ստացված բերքը ժամանակին և անկորուստ իրացնելու համար ձեռք են բերվել պայմանավորվածություններ մի շարք վերամշակող գործարանների հետ:

Համայնքում առկա հիմնախնդիրներն են՝

1. Համայնքի մանկապարտեզի շենքի հարցը:
2. Նոր խորքային հորի հորատումը:
3. Մշակույթի տան հիմնանորոգումը:
4. Ներհամայնքային ճանապարհների մասնակի վերանորոգումը:

Հացիկ համայնքի ղեկավար



Ա.Եղիազարյան